

ՅԱՅԳԵՐԳ

Գիշերն աղուոր ու հեշտին,
Գիշերն աղուոր ու յըստակ...
Ման կուգամ լուռ լուսնին տակ,
Լի ըզձանգով երկինքին:

Աչքերըս վառ ես յառեր
Եմ երկնքին աստղաշող
Ուրկէ կ'իջնէ շիթ մը ցօղ
Խորն հոգիիս սիրավէր:

Ու այդ կայլակ մը ցօղէն
Կ'ըլլամ ես ծով մը անհուն,
Կոհակներով փողփողուն,
Տիեզերք մը ջրերդէն:

Գիշերն աղուոր ու հեշտին,
Գիշերն աղուոր ու յըստակ . . .
Երազներով ջինջ, ներմակ,
Կը շնչեմ սէրն երկնքին:

ՍԻՐԵՐԳ

Այսօր նորէն
Հեռուներէն,
Փքքուն վարդեր շրթներուս,
Մէյ մէկ բոցեր աչերուս,
Սիրոյ կարօտ ու կաքոգին,
Ի՛մ անգին,
Քեզի՛ կուգամ,
Ո՛վ սէր իմ:

Հեռուներէն
Օրօրուելէն,
Հերմակ քեւեր ուսերուս,
Ոսկի ծամեր ալ գըլխուս,

Անհուն սիրով, վառ հոգիով,
Ու գինով,
Քեզի՛ կուգամ,
Ո՛վ սէր իմ:

Քեզի՛ կուգամ,
Ո՛վ սէր իմ,
Մեղրը հոսող շրթներուդ,
Առեւանգող աչերուդ
Ու զիս լափող այդ անյատակ
Կուրծփիղ տակ
Սէր ծըծելու,
Հեծելու:

ՅՈՎՀԱՆ ՋԻԹԵՆԻ